Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական

Կիսվեք նրանով, ինչին հավատում եք

Հայրս գիտնական էր: Մի անգամ կարդացի նրա ելույթը, որ ունեցել էր բազմամարդ դահլիճում: Ելույթում նա խոսում էր Արարման և Արարիչի մասին, մինչ խոսում էր գիտական թեմայով: Գիտեի, որ խմբում քչերն էին կիսում էին նրա հավատքը: Ուստի, ես հիացմունքով ասացի նրան. «Հայրիկ, դու կիսվեցիր քո վկայությամբ»:

Նա նայեց ինձ զարմանք արտահայտող հայացքով և ասաց. «Իսկապե՞ս»: Նա նույնիսկ չգիտեր, որ համարձակ քայլ էր կատարել: Նա պարզապես հաղորդում էր մի բան, որ գիտեր՝ ճիշտ է:

Բոլորս մկրտվելիս խոստացել ենք կիսվել ավետարանով: Մենք կարող ենք հավատքով աղոթել՝ զգալու Փրկչի սերը մեր և բոլորի հանդեպ, ում հանդիպում ենք: Դուք ոգևորված կլինեք Տիրոջ Եկեղեցով և Նրա աշխատանքով, և դա ակնհայտ կլինի: Ասել այն, ինչին հավատում եք, կլինի ձեր անհատականության մի մասը: ●

Հարմարեցված է «Երեխա և աշակերտ» ելույթից, Լիահոնա, *մայիս 2003, 29-32:*

Կիսվելու պարզ եղանակներ

Դուք կարող եք կիսվել ավետարանով շատ եղանակներով: Գրեք, թե ինչ կարող եք ասել յուրաքանչյուր մարդու՝ կիսվելով նրանով, ինչին հավատում եք: Դուք ունեք առաջին օրինակը:



ԴԱՄՐԵ ՍԱՐԱՅԱ ԹԱՍԵՅԻ